

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ, ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սոֆիա

Մեծ ուրախությամբ շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը՝ հերոսական Բուլղարիայի ազատագրության և վերածնության երեսնամյակի առթիվ: Ջերմորեն ցանկանում ենք, որ ձեր սոցիալիստական հայրենիքը ավելի ամրապնդվի և ծաղկի՝ աշխատասեր և տաղանդավոր բուլղար ժողովրդի նորանոր նվաճումներով: Ձեր մեծ տոնի առթիվ Մենք մի անգամ ևս հայտնում ենք Մեր անկեղծ սերը և հարգանքը դեպի եղբայր բուլղար ժողովուրդը:

Թող Աստված օգնական և պահապան լինի ձեր սուրբ եկեղեցուն այժմ և հավիտյան:

Եղբայրական ջերմ սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4-ը սեպտեմբերի 1974 թ.,
Ս. Էջմիածին

*
* *

Ս. Էջմիածին

Եղբայրական սիրով հԱստված, ամբողջ հոգով շնորհակալ ենք Ձերդ Սրբության այն ջերմ և սրտագին շնորհավորանքի համար, որ Դուք հղել էիք Մեզ մեր երկրում սոցիալիստական հեղափոխության 30-ամյա տարեդարձի առթիվ, հեղափոխություն, որի շնորհիվ մեր երկիրը ձեռք բերեց ազատություն, վերելքի ու բազմակողմանի ծաղկման հնարավորություններ՝ շնորհիվ Սովետական մեծ Միության եղբայրական անշահախնդիր օգնության:

Թող Աստված ամրապնդի մեր փոխադարձ սիրո կապերը համայն աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում՝ հանուն ժողովուրդների բարեկամության և սոցիալական արդարության հողագնդի վրա:

Ձերդ Սրբության անձնվեր աղոթակից՝

ՄԱՔՍԻՄ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

17-ը սեպտեմբերի 1974 թ.,
Սոֆիա